

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
1-ին ՄԱՍ



Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան

ԵՐԵՎԱՆ 2021

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական իշխանության անկախության ապահովումը դատաիրավական բարեփոխումների համատեքստում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետներն ու եզրահանգումները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կազմակերպության տեսակետների հետ:

Աշխատանքային խումբ՝

Հասմիկ Հարությունյան, Դիանա Դանիելյան, Արաքս Մելքոնյան

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	7
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼ	9
Վարույթ հարուցելու առիթները և վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները	9
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ	11
Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները	16
ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՂՐՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ և ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	18
ՎԱՐՈՒՅԹԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ	22
Դատավորների մասնակցությունը վարույթներին	23
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	26
ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	30
ԲԴԽ որոշումների հիմնավորումներն ու պատճառաբանությունները	31
ԿԻՐԱՌՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ	35
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	37
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատավորների կարգապահական պատասխանատվության հարցը դատական իշխանության անկախության և արդյունավետության ապահովման կարևորագույն հարցերից է, ինչը էական ազդեցություն է ունեցել և շարունակում է ունենալ Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության գործունեության վրա:

Դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացի արդյունավետությունն ու օրինականությունը մեծապես կախված է պատասխանատվության հիմքերից, գործընթացում ներգրավված մարմինների ձևավորման ու գործունեության սկզբունքներից, իրավասությունների շրջանակից ու կայացվող որոշումների հիմնավորումներից և ամբողջական վարույթի ընթացքի օրինականությունից:

Վենետիկյան հանձնաժողովի կողմից այս առնչությամբ բազմիցս նշվել է, որ դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու կանոնները ուղղակիորեն ազդում են դատավորների անկախության վրա: Լայն և ոչ բավարար հստակություն ունեցող սահմանումներն ու հիմքերը, օրինակ, մեծացնում են դրանց պրակտիկ մեկնաբանության չարաշահման հնարավորությունները, ինչը բնականաբար բացասական ազդեցություն կարող է թողնել դատավորների անկախության վրա¹:

ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը, հիմքերն ու գործընթացին վերաբերելի այլ հարցերը:

ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով, մասնավորապես, սահմանված են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընդհանուր սկզբունքները: Օրենսգրքի 141-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթը իրականացվում է օրինականության, դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության ու խտրականության արգելքի սկզբունքների հիման վրա:

Չնայած գործող օրենսդրական կարգավորումներին և պարբերաբար իրականացվող օրենսդրական փոփոխություններին՝ դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտը շարունակում է մնալ առավել խնդրահարույցներից մեկը՝ պայմանավորված ինչպես օրենսդրական ամրագրում ստացած ընթացակարգերով ու հիմքերի անհստակությամբ, այնպես էլ

¹ Opinion no 841/2016 on Republic of Kazakhstan on the draft Code of Judicial Ethics

պրակտիկայում դրանց կիրառությամբ: Կազմակերպությունը հարցի առնչությամբ արդեն իսկ իրականացրել է հետազոտություն՝ ուսումնասիրելով մինչև Բարձրագույն դատական խորհրդի ձևավորումը գործող Արդարադատության խորհրդի կողմից կայացված կարգապահական պատասխանատվության որոշումները՝ կարևորելով վարույթների հարուցման օրենսդրական հիմքերի ու պրակտիկ վերլուծության հարցը, կայացված որոշումների հիմնավորվածության, ընտրված պատասխանատվության միջոցների համաչափության և այլ էական հարցեր²:

Սույն հետազոտության շրջանակներում դիտարկվել են Բարձրագույն դատական խորհրդի (հետայսու տեքստում՝ ԲԴԽ) կողմից 2018 թվականի ապրիլից (վերջինիս ձևավորումից հետո) մինչ 2020 թվականի մարտի 25-ի ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում կատարված փոփոխություններով ամրագրված կարգավորումներով հարուցված կարգապահական վարույթների վերաբերյալ կայացված թվով 25 որոշումներ՝ նպատակ հետապնդելով ուսումնասիրել կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական կարգավորումների համալիրությունն ու հստակությունը, առկա բացերն ու դեռևս խնդրահարույց կարգավորումները, դրանց պրակտիկ կիրառման խնդիրներն ու գոյություն ունեցող այլ կարևոր հարցեր, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ դատավորների անկախության ու դատական իշխանության արդյունավետության վրա³:

² <https://prwb.am/hy/2019/10/05/study-of-disciplinary-liability-of-judges-practice-for-2012-2017-analysis-of-the-decisions-of-justice-council-of-the-republic-of-armenia/>

³ 2020 թվականի մարտի 25-ի օրենսդրական փոփոխություններից հետո դատավորների կարգապահական պատասխանատվության պրակտիկայի և օրենսդրության ուսումնասիրությունը ներկայացվում է մեկ այլ, առանձին զեկույցի տեսքով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է Կազմակերպության կողմից նախկինում գործարկված մեթոդաբանության հիման վրա: Օբյեկտիվ և ամբողջական տվյալներ դուրս բերելու համար ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված ՀՀ բարձրագույն դատական խորհրդի դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները⁴: Ուսումնասիրության համար օգտագործվել են վերլուծության ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդներ:

Կարգապահական պատասխանատվության որոշումներից ելքագրված տվյալները ներբեռվել են Microsoft Excel էքզել ծրագրով պատրաստված կիսաձևայնացված հարցաշարով՝ բաղկացած մի շարք թեմատիկ բաժիններից: Հարցաշարի ձևայնացված հատվածներում տվյալները մուտքագրվել են նախօրոք մշակված կոդերով: Կիսաձևայնացված հատվածներում որոշումներից դուրս են բերվել տեքստային բնույթի ամբողջական մեջբերումներ: Որոշումները բաժանվել են՝ ըստ տարեթվերի, այնուհետև ըստ կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար հիմք հանդիսացած առավել հաճախ հանդիպող գործողությունների կրկնությունների: Խախտումների տարածվածությունը հասկանալու համար իրականացվել է նաև դրանց աշխարհագրական բաշխվածության ուսումնասիրություն՝ ըստ դատարանների: Առանձնացվել է նաև կարգապահական վարույթի յուրաքանչյուր փուլին վերաբերելի գործողությունների վերաբերյալ տվյալները, կայացվող որոշումների հիմնավորումներն ու հիմքերը:

Ուսումնասիրությամբ իրականացվել է դուրս բերված տեղեկությունների համադրում՝ քանակական տվյալներ ստանալու նպատակով: Հավաքագրված տվյալները ուսումնասիրվել են մասնավորապես ըստ ներքոնշյալ բլոկների՝

- Որոշման կայացման ամսաթիվ
- Դատավոր
- Դատարան
- Կարգապահական վարույթ հարուցելու առիթը
- Կարգապահական վարույթ հարուցող մարմինը
- Կարգապահական վարույթ հարուցելու հիմքը
- Դատավորի մասնակցությունը նիստին
- Վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և այլն:

Տեքստային բնույթի տեղեկությունները ենթարկվել են որակական վերլուծության՝ ըստ դատավորի կողմից կարգապահական խախտում դիտարկված կամ չդիտարկված գործողության նկարագրության, յուրաքանչյուր խախտման վերաբերյալ

⁴ <http://court.am/hy/disciplinary>

դատավորի բացատրության, կարգապահական խախտման վերաբերյալ ԲԴԽ կողմից տրված գնահատականի:

Ուսումնասիրությունը իրականացվել է մինչ 2020 թվականի մարտ ամիսը ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում կատարված փոփոխությունների ուժի մեջ մտնելը հարուցված կարգապահական վարույթների և որոշումների կայացումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկված վարույթները ընթացել են մինչ այդ փոփոխությունները գործող օրենսդրական կարգավորումների հիման վրա:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրվել են Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության քննության վերաբերյալ 24 և ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության քննության վերաբերյալ 1 որոշումներ:

Ուսումնասիրված 25 որոշումներից 16-ը կայացվել են 2019 թվականին, ընդ որում՝ գերակշիռ մասը (11 որոշում) առաջին վեց ամիսների ընթացքում: Մնացած 9 որոշումներից 8-ը կայացվել է 2020 թվականին: 1 գործ, որը վերաբերել է ԲԴԽ անդամի կարգապահական պատասխանատվության հարցին, կասեցված է եղել⁵:

Դիտարկված որոշումներից մեծ մասը՝ թվով 14, կայացվել են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատավորների նկատմամբ:

Երկուական որոշումներ Արարատի և Վայոց Ձորի և Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատավորների նկատմամբ, մեկական Տավուշի և Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավորների նկատմամբ: Նմանապես, 2-ական վարույթով որոշում է կայացվել սնանկության դատարանի դատավորների նկատմամբ:

Մեկական որոշումներ կայացվել են Վերաքննիչ քրեական և Վճռաբեկ դատարանի դատավորների նկատմամբ: Վարչական դատարանի դատավորների առնչությամբ վարույթներ և որոշումներ չեն եղել:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, ԲԴԽ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարան դիմելու հիմքով կասեցված գործի վարույթը կարճվել է: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանի 17 նոյեմբերի 2020 թվականի աշխատակարգային որոշմամբ ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է⁶: ՀՀ սահմանադրական դատարան դիմումը ներկայացվել է այն հիմքով, որ ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը ԲԴԽ քննում է ԲԴԽ առնվազն երեք անդամի միջնորդության հիման վրա, և դիմողի կարծիքով, ՀՀ դատական օրենսգրքի (մինչև 25.03.2020 թ. ՀՕ-197-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 85-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Օրենսգրքի 71-րդ հոդվածի, 86-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ, 6-րդ կետերի, 94-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումների համակարգային փոխկապակցվածության մեջ, առերևույթ հակասում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածին այնքանով, որքանով վիճարկվող հոդվածը ԲԴԽ առնվազն 3 անդամներին իրավունք է վերապահում Բարձրագույն դատական խորհրդին միջնորդություն

⁵<https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/fBnog3LQkIa2VnzW17UW6JglimRT9VlzVelGndtU.pdf>

⁶<http://www.concourt.am/armenian/decisions/working/2020/pdf/sdav-205.pdf>

ներկայացնել ԲԴԽ այլ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու վերաբերյալ, մինչդեռ Օրենսգիրքը որևէ այլ նորմով չի բացառում նշված անձանց մասնակցությունը հարցի քննարկմանը և քվեարկությանը:

Սահմանադրական դատարանը վարույթը կարճել է, պատճառաբանելով, որ եթե վիճարկվող դրույթը դատարանի կողմից չի կիրառվելու կամ այլևս ենթակա չէ կիրառման, կամ այդպիսի կիրառումը կրելու է ձևական բնույթ, ապա Մահմանադրական դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշմամբ վիճարկվող դրույթի վերաբերյալ արտահայտած ցանկացած գնահատական որևէ նշանակություն չի ունենալու կոնկրետ գործի լուծման համար (դատարանների կողմից վիճարկվող նորմի ձևական կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանը դիրքորոշում է արտահայտել իր՝ 14.04.2020թ. ՄԴԱՈ-81 որոշման մեջ): Այդ պարագայում դատարանի դիմումը ենթադրելու է ոչ թե կոնկրետ, այլ վերացական սահմանադրական վերահսկողություն: Այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: Դատարանը ընդունել է նաև, որ հետագայում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով որոշում կայացնելիս Բարձրագույն դատական խորհուրդը կիրառելու է այլ դրույթներ կամ, նույնիսկ եթե, ի թիվս այլնի, վկայակոչի վիճարկվող դրույթը, ապա այն ըստ էության նոր իրավական հետևանքներ չի կարող առաջացնել: Այսինքն՝ քննարկվող դեպքում որևէ կերպ չի հիմնավորվում, որ Բարձրագույն դատական խորհրդի վարույթում գտնվող տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն Օրենսգրքի (մինչև 25.03.2020 թ. ՀՕ-197-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 85-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի կիրառման միջոցով:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼ

Վարույթ հարուցելու առիթները և վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները

ՀՀ Դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածով նախատեսված են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները: Մասնավորապես, հոդվածի առաջին մասի համաձայն՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

1) անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը.

2) կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները.

3) վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

Ուսումնասիրության ընթացքում դիտարկված որոշումներում վարույթ հարուցելու առիթները ունեն հետևյալ պատկերը՝

Առիթ	Վարույթների քանակ
Անձի դիմումի հիման վրա	12 վարույթ
Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի դիմումի հիման վրա	10 վարույթ
Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա	1
Վարույթ հարուցող անձանց կողմից առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերման հիման վրա	2

Ինչպես կարող ենք նկատել, վարույթների մեծամասնությունը հարուցվել է անձի դիմումի հիման վրա:

Օրենսդիրը սահմանել է նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները:

Մասնավորապես, օրենսգրքի 145-րդ հոդվածը նախատեսում է, որ՝

1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

- 1) Կարգապահական հարցերի հանձնաժողովը.
- 2) Լիազոր մարմինը:

Դիտարկված գործերով վարույթ հարուցելու իրավասություն տվյալ ժամանակահատվածի օրենսդրական կարգավորումներով ունեցել են Կարգապահական հարցերի հանձնաժողովն ու լիազոր մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը:

Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ *հարուցված 25 վարույթներից 13-ը նախաձեռնվել է լիազոր մարմնի՝ Արդարադատության նախարարության կողմից, 10՝ կարգապահական հարցերի հանձնաժողովի:*

Ուսումնասիրված գործերից մեկով վարույթը հարուցվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրված Վճռաբեկ դատարանի դատավորի նկատմամբ: Դիմումը ներկայացվել է ԲԴԽ 3 անդամների կողմից: Նմանապես, ԲԴԽ անդամի նկատմամբ վարույթը հարուցվել է ԲԴԽ երեք անդամներից բաղկացած հանձնաժողովի դիմումի հիման վրա:

Նման ընթացակարգ նախատեսված է ՀՀ Դատական օրենսգրքի 85-րդ հոդվածով: Վերջինիս համաձայն՝ ԲԴԽ անդամը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ սույն օրենսգրքով սահմանված դատավորի վարքագծի կանոնները խախտելու համար: ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը ԲԴԽ քննում է ԲԴԽ առնվազն երեք անդամի միջնորդության հիման վրա:

ԲԴԽ անդամի կարգապահական պատասխանատվության հարցի հետագա քննարկումը իրականացվում է ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով 85-րդ հոդվածի պահանջները:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

3) դատավորի կողմից օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելը.

4) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ միջամտության մասին Բարձրագույն դատական խորհրդին չհայտնելը:

2. Սույն գլխի իմաստով՝ ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

3. Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակագրկում է դատական իշխանությունը: Կոպիտ է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրկում է դատական իշխանությունը:

4. Սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

5. Սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

6. Էական կարգապահական խախտում է՝

1) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը կամ

2) դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:⁷

⁷ ՀՀ դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը ճանաչվել է Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին հակասող 15.11.19 ՍԴՈ-1488 որոշմամբ:

Ուսումնասիրված որոշումներով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերն են եղել.

Նյութական և դատավարական նորմի խախտում

Նյութական նորմի կոպիտ խախտում	1
Դատավարական նորմի ակնհայտ խախտում	10
Դատավարական նորմի կոպիտ խախտում	8

Վերոնշյալից 4 դեպքում խախտումը որակվել է ակնհայտ և կոպիտ միաժամանակ:

Վարքագծի կանոնների խախտում

Կոպիտ անփութությամբ	9
---------------------	---

Ակնհայտ և կոպիտ է որակվել, օրինակ, դատավորի կողմից ժամկետից շուտ վճռի օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ մակագրություն կատարելը, միևնույն ժամանակ առանց դատական նիստի հայցի ապահովումը վերացնելու վերաբերյալ որոշման կայացումն ու որոշումը կողմին սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկելը⁸:

Ակնհայտ և կոպիտ է որակվել նաև մեկ վարույթի շրջանակներում դատավորի կողմից 3 անգամ հայցը վերադարձնելը, այն դեպքում, երբ վերադարձման բոլոր պահանջները կարող էին ներկայացվել մեկ ակտում՝ մեկ որոշմամբ⁹: Մասնավորապես, *Հանձնաժողովը գտել է, որ <<դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով, որն էլ հեղինակագրկում է դատական իշխանությունը և կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության: Ընդ որում՝ Հանձնաժողովը գտել է, որ դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմի խախտումը կրել է պարբերական բնույթ, քանի որ այն կատարվել է մեկից ավելի անգամ>>*¹⁰:

8 դեպքում դատավարական նորմի խախտումը որակվել է կոպիտ՝ որից մեկում անփութությամբ կատարված:

Մեկ դեպքում ըստ ԲԴԽ որոշմամբ հասանելի տեղեկատվության՝ վարույթ հարուցած մարմնի կողմից արարքին որակում չի տրվել և մեղքի ձևը չի նշվել¹¹: Մասնավորապես, վերջինիս պարագայում վարույթ հարուցած մարմինը՝ ՀՀ Արդարադատության նախարարը, դատավորին կարգապահական

⁸ ԲԴԽ-5-Ո-Կ-03

⁹ ԲԴԽ-5-Ո-Կ-02

¹⁰ ԲԴԽ-5-Ո-Կ-02

¹¹ ԲԴԽ-17-Ո-Կ-06

պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմելով ԲԴԽ՝ ներկայացրել է պահանջի հիմնավորումներ, սակայն միջնորդությամբ վերջնական չի ներկայացրել, թե կատարված արարքը ինչպիսի որակում է ստանում: Նախարարի կողմից ներկայացվել է, որ թիվ ԱՎԴ2/0056/07/08 դատական գործով դատավորի կողմից կայացվել է բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշում, որը չի բխում քաղաքացու բնակարանի անձեռնմխելիության և բնակարանում խուզարկություն կատարելու վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի, Մահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների պահանջներից, ինչով խախտվել է քաղաքացու բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը...: Ավելին, որպես Միջնորդության բավարարման հիմք որոշման մեջ նշված՝ դատական նիստի ժամանակ ավագ քննիչի կողմից ներկայացված փաստարկներին ծանոթանալու նպատակով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 20.09.2018թ. թիվ 59-Ե/948-18 գրությամբ դատավորից հայցվել է համակարգչային արձանագրման կրիչի օրինակը, սակայն ձայնագրող համակարգչի խափանված լինելու պատճառաբանությամբ 25.09.2018թ. պատասխան գրությամբ ստացվել է դատական նիստի արձանագրության թղթային տարբերակը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քննիչի կողմից չի նշվել որևէ փաստական տվյալ, որը Ոստիկանության Արտաշատի բաժնից ստացված գրության հետ համակցությամբ դատավորին թույլ կտար գալ այն եզրահանգման, որ առկա են միջնորդություն բավարարելու հիմքեր:

Չնայած միջնորդություն ներկայացրած մարմնի կողմից ներկայացված իրավական ու փաստական հանգամանքներին, որոնց հղում է կատարվել ԲԴԽ որոշման տարբեր հատվածներում, այնուհանդերձ կատարված արարքը ՀՀ դատական օրենսգրքի պահանջներով որակում չի ստացել և պատասխանատվության ենթարկելու հիմքը, որպես այդպիսին, չի արտացոլվել:

Ինչ վերաբերում է ԲԴԽ դիրքորոշմանը, ապա վերջինս ներկայացված և վարույթի փաստական ու իրավական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում գտել է, որ *Դատավորի կողմից որոշումը կայացնելիս թույլ է տրվել դատավարական նորմի խախտում, մասնավորապես դատական ակտում դրա հիմքերն արտացոլված են թերի ու անհարկի վերացական...:* Պարզ չէ, թե ներկայացված նյութերի մեջ կոնկրետ որ փաստական հանգամանքն է Դատավորը դիտարկել որպես օպերատիվ-քննչական անհրաժեշտ բաղադրիչ, որի համակցությամբ կարող էր որոշվել օպերատիվ տեղեկատվության բավարար լինելը:

Մեկ այլ գործով արարքը վարույթ հարուցող մարմնի կողմից վարքագծի կանոնի կոպիտ խախտում է որակվել այն հիմնավորմամբ, որ դատավորը ինքնաբացարկի որոշում է կայացրել ոչ թե օրենսգրքով նախատեսված՝ ինքնաբացարկի հիմք

հանդիսացող որևէ հանգամանքի առկայության պարագայում, այլ մեղադրանքի կողմից չհիմնավորված կասկածները փարատելու պատճառաբանությամբ¹²:

Հատկանշական է նաև այն, որ ուսումնասիրված և վերոնշյալ 4 գործերի մեջ առկա է ևս մեկ հարուցված վարույթ՝ կրկին դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդություն հայտնելու առնչությամբ:

Մասնավորապես, կարգապահական հարցերի հանձնաժողովը արձանագրել է, որ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել բոլոր այն դեպքերում, երբ դա պահանջվում է օրենքով, իսկ օրենքի պահանջը, ի թիվս այլնի, հանգում է նրան, որ դատավորը պետք է ինքնաբացարկ հայտնի, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության առումով, հակառակ դեպքում դատավորը պարտավոր է քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը: Տվյալ վարույթի շրջանակներում պարզվել է, որ *Դատարանի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 683-Լ հրամանի, որը նույն օրը հրապարակվել է դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում՝ հաստատվել է Դատարանի, այդ թվում՝ Ավան նստավայրի 2019թ. հունվար ամսվա հերթապահության ժամանակացույցը, ըստ որի Ավան նստավայրի դատավորները պետք է հերթապահություն իրականացնեին 2019 թ հունվարի 11-ից հունվարի 22-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում: Նույն ժամանակացույցով սահմանվել են նաև դատավորի հերթապահության օրերը՝ հունվարի 11-ին, 15-ին, 17-ին, 19-ին, 22-ին: Դատավորը նշել է, որ Դատարանի նախագահի կողմից տվյալ միջնորդությունների մակագրումը հաստատված ժամանակացույցից դուրս գտնվող դատավորին՝ իրավաչափ չի եղել: Դատավորը գտել է, որ տվյալ պայմաններում լրացուցիչ ներգրավված դատավորի, տվյալ դեպքում՝ իր կողմից այդ միջնորդությունների քննարկումն ու ըստ էության լուծումը չէին կարող իրավաչափ համարվել, ավելին՝ կհանգեցնեին հասարակական բարձր հնչեղություն ունեցող գործով կայացվելիք դատական ակտի վիճարկումների և կառաջացնեին բացասական իրավական հետևանքներ, ինչով պայմանավորված կայացրել է ինքնաբացարկ հայտնելու մասին որոշում¹³:*

Կարգապահական հանձնաժողովը եզրահանգել է, որ դատավորը թույլ է տվել դատավորի վարքագծի կանոնի կոպիտ խախտում, ինչը կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության:

Վարքագծի կանոնների խախտման հիմքով հարուցված 9 գործով արարքը որակվել է որպես կոպիտ անփութությամբ կատարված: Ընդ որում, դրանցից 4-ով արարքը զուգորդված որակվել է նաև որպես դատավարական նորմերի կոպիտ խախտումը:

¹² ԲԴԽ-24-Ո-Կ-07

¹³ ԲԴԽ-27-Ո-Կ-09

Դիտարկված գործերից վարույթ հարուցող մարմնի կողմից դատավորի **արարքը էական խախտում է որակվել 3 գործերով**¹⁴:

Այսպես, հարուցված վարույթներից մեկով Արդարադատության նախարարն իր միջնորդության մեջ նշել է, որ Դատավորի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ կատարողական թերթը տրվել է օրինական ուժի մեջ չմտած, բեկանված դատական ակտի հիման վրա, որի արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասին կարգավորման ուժով ստեղծվել է բեկանված դատական ակտի կատարման պարտադիրության և տեսանելիություն, և անհրաժեշտություն՝ հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հարկադիր կատարողի համար նշված կատարողական թերթը կատարելուց ձեռնպահ մնալու որևէ իրավական հնարավորության բացակայությունը: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Արդարադատության նախարարը գտել է, որ *Դատավորի կողմից թույլ տրված խախտումն ակնհայտ է, կոպիտ և կատարված է կոպիտ անփութությամբ: Վարույթ հարուցած մարմինը գտել է նաև, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված էական խախտում է: Դատավորի կողմից այնպիսի արարք է կատարվել, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ, ինչպես նաև դատավորի կողմից վարույթ հարուցած մարմնին ներկայացրած բացատրությունը հիմք է տալիս կասկածի տակ առնել նրա պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը*¹⁵:

Այսինքն, մի իրավիճակում վարույթ հարուցող մարմնի կողմից դեռևս ուժի մեջ չմտած դատական ակտի վերաբերյալ կատարողական թերթ տալը էական խախտում է որակվել, մեկ այլ դեպքում՝ ժամկետից շուտ վճռի օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ մակագրություն կատարելն ու առանց դատական նիստ հրավիրելու հայցի ապահովումը վերացնելու մասին որոշում կայացնելը, միևնույն ժամանակ որոշումը կողմին ժամկետի խախտմամբ ուղարկելը որակվել է որպես ակնհայտ և կոպիտ խախտում¹⁶: Ընդ որում, հավելյալ տեղեկություն վարույթ հարուցող մարմնի կողմից ներկայացված փաստարկների ու հիմնավորումների վերաբերյալ, հասանելի չէ:

Վարույթ հարուցող մարմնի կողմից որպես էական խախտում բնութագրված երկու վարույթների շրջանակներում ԲԴԽ որոշման մեջ հղում է կատարվել Լիազոր մարմնի կարգապահական պատասխանատվության ենթարկելու դիմումին, որի համաձայն՝ *առկա են հիմքեր դատավորի կողմից թույլ տված խախտումն էական*

¹⁴ ԲԴԽ-57-Ո-Կ-13, ԲԴԽ-57-Ո-Կ-14, ԲԴԽ-8-Ո-Կ-04

¹⁵ ԲԴԽ-8-Ո-Կ-04

¹⁶ ԲԴԽ-5-Ո-Կ-03

բնորոշելու համար, ինչի առնչությամբ լիազոր մարմինը վկայակոչել է էական կարգապահական խախտման բնորոշման վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019 թ. ԹԻՎ ԲԴԽ-8-Ո-Կ-04 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը¹⁷:

Հավելյալ տեղեկություն, թե մասնավորապես ինչպես է կոնկրետ գործի հանգամանքների հիման վրա խախտումը որակվել որպես էական, հասանելի չէ:

Հարկ է նաև նշել, որ վերոնշյալ նույն երկու գործերով ԲԴԽ-ն, գնահատելով ինչպես օրենսդրական կարգավորումները, այնպես էլ փաստացի վարույթով ներկայացված իրավիճակը, հանգել է եզրակացության, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության մեկամսյա ժամկետը բաց է թողնվել, ինչով պայմանավորված վարույթ հարուցած մարմնի միջնորդությունը մերժվել է:

Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները

ՀՀ դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված են կարգապահական վարույթ հարուցելու կոնկրետ ժամկետները: Մասնավորապես, հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքերով՝ խախտումը հայտնաբերելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում: Եթե խախտումը հայտնաբերվել է մինչև դատական վարույթն ավարտվելը, ապա սույն կետով նախատեսված վեցամսյա ժամկետը հաշվարկվում է դատական վարույթն ավարտվելու պահից: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե դատական վարույթն ավարտվելուց հետո անցել է հինգ տարի:

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելու հիմքով՝ այն հայտնաբերելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց վեց ամիս հետո:

3) դատավորի կողմից օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելու, սույն օրենսգրքով սահմանված կարգով արդարադատության կամ որպես դատարան օրենքով նախատեսված այլ լիազորությունների, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու մասին Բարձրագույն դատական խորհրդին չհայտնելու հիմքերով՝ արարքը հայտնաբերելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց մեկ տարի հետո:

¹⁷ ԲԴԽ-57-Ո-Կ-13; ԲԴԽ-57-Ո-Կ-14:

Ուսումնասիրված վարույթների և որոշումների մեծամասնության պարագայում՝ այն է 13 դեպքում, վարույթը հարուցվել է դատավարական նորմի խախտման հիմքով՝ համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում:

Վարքագծի կանոնների խախտման հիմքով հարուցված 9 գործերով՝ այն հայտնաբերելուց հետո՝ 1 ամսյա ժամկետում, բայց ոչ ուշ քան այդ հիմքը ծագելուց 6 ամիս հետո:

ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՂՐՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ և ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրված կարգապահական վարույթները ցույց են տալիս, որ գործերի մեծամասնության պարագայում՝ 15 վարույթներով, մեկ գործով արձանագրվել է միայն մեկ կարգապահական խախտում: Միևնույն ժամանակ, սակայն, հանդիպել են դեպքեր, երբ մեկ գործով բարձրացվել է մեկից ավելի՝ ընդհուպ մինչև 4-5 խախտումների հարց:

Այսպես, վերոնշյալ գործերից մեկի վարույթով¹⁸ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- Կասեցված վարույթը վերսկսելու մասին որոշումը մինչև վարույթ հարուցելու օրը կողմերին չի ուղարկվել,
- Բացակայող պարտապանի նկատմամբ հայտարարված հետախուզման վարույթի ավարտից հետո բացակայող պարտապանին վերջին հայտնի՝ գտնվելու կամ բնակության վայրի հասցեով ծանուցում չուղարկելու պայմաններում սնանկության գործի վարույթը շարունակվել է և վճիռ է կայացվել:
- 03.05.2019 թվականի վճիռը և 10.05.2019 թվականի որոշումը կողմերին ուղարկվել է 05.03.2020թ-ին՝ ժամկետի խախտմամբ
- Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանին սնանկ ճանաչելու մասին օրենքի 19-րդ հոդվածի գ կետում նշված մարմիններին տեղեկացվել է կրկին ժամկետի բաց թողնմամբ:
- Դատարանի վճռի և որոշման մասին Կառավարչին տեղեկացումը միայն 05.03.2020թ-ին ուղարկվելու արդյունքում չի ապահովել Կառավարչի կողմից ոչ ուշ քան դատական ակտի ուժի մեջ մտնելու պահից՝ 5 օրվա ընթացքում պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին տողով նշանակելու մասին տեղեկությունները www.azdarar.am կայքում հրապարակելու, ինչպես նաև դատարանի շենքում հատուկ տեղում փակցնելու պարտականության կատարումը:

Սույն գործով ԲԴԽ-ն մանրամասն օրենսդրական վերլուծության ու մեկնաբանության է ենթարկել սնանկության ինստիտուտը, սահմանված ժամկետները, ընթացակարգերը: Խորհուրդը եզրահանգել է, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումները հանգեցրել են վարույթի մասնակիցների իրավունքների խախտմանը, մասնավորապես, պարտատիրոջ դեպքում՝ ողջամիտ ժամկետներում իր պահանջների բավարարում ստանալու իրավունքի խախտմանը:

¹⁸ ԲԴԽ-29-Ո-Կ-8

Երկու վարույթների շրջանակներում արձանագրվել է 4-ական խախտում¹⁹:

Այսպես, մեկ վարույթի շրջանակներում²⁰ սնանկության գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ՝

- Պարտապանի լուծարման վարույթ սկսելու որոշումների կայացումից հետո սնանկության գործերով կառավարիչների կողմից որևէ հաշվետվություն դատարան չի ներկայացվել,
- Սնանկության գործերով պահանջների վերջնական ցուցակները հաստատելու մասին որոշումների կայացումից հետո այլ գործողություններ, այդ թվում՝ սնանկության գործերով կառավարիչների կողմից, չեն իրականացվել,
- Սնանկության առանձին գործերով պահանջների վերջնական ցուցակների հաստատման վերաբերյալ որոշումների կայացումից հետո սնանկության գործերով կառավարիչների կողմից դատարան ներկայացվել է տեղեկատվություն պարտատերերի առաջին ժողովը չկայանալու, ինչպես նաև պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացված չլինելու վերաբերյալ, որից հետո այլ գործողություն, այդ թվում՝ կառավարիչների կողմից, չի կատարվել:
- Նմանապես, սնանկության առանձին գործերով կայացվել են պատասխանողի և նրա գույքի հետախուզում հայտարարելու և գործի վարույթը կասեցնելու մասին որոշումներ,
- Իսկ առանձին գործերով վարույթը վերսկսելու մասին որոշումները կայացվել են վարույթը կասեցնելու հիմք հանդիսացող հանգամանքները վերանալուց ավելի քան համապատասխանաբար 8 և 2 տարի անց:

Մյուս դեպքում²¹ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- Կառավարչի կողմից որևէ հաշվետվություն չներկայացնելու պայմաններում Դատարանը որևէ միջոց չի ձեռնարկել վերջինիս լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու ուղղությամբ,
- Կառավարչի կողմից որևէ գործողություն չիրականացնելու՝ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման հիմքերի առկայության պայմաններում Դատարանը որևէ միջոց չի ձեռնարկել վերջինիս լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու ուղղությամբ,
- Թիվ ԵԴ/0602/04/18 սնանկության գործով 23.05.2018թ. կայացվել է պատասխանողի և նրա գույքի հետախուզում հայտարարելու և գործի վարույթը կասեցնելու մասին որոշում և գործի վարույթի կասեցված լինելու ընթացքում՝ 01.10.2018թ. կայացվել է սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշում,

¹⁹ ԲԴԽ-57-Ո-Կ-13, ԲԴԽ-57-Ո-Կ-14

²⁰ ԲԴԽ-57-Ո-Կ-13

²¹ ԲԴԽ-57-Ո-Կ-14

- Քննարկվող գործով սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու որոշման և սնանկ ճանաչելու մասին վճռի միջև առկա է մոտ 57 օր տարբերություն:

Երկու դեպքում էլ ԲԴԽ կողմից քննարկման է ենթարկվել միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետների հարցը և որոշվել է միջնորդությունը մերժել՝ վերջինիս քննության օրենքով սահմանված ժամկետը լրացած լինելու հիմքով:

4 վարույթների ընթացքում վարույթ հարուցող մարմնի կողմից արձանագրվել է 3-ական կարգապահական խախտում: Հատկանշական է, որ նշված դեպքերում ԲԴԽ կողմից տարբեր եզրահանգումներ են կատարվել:

Վերոնշյալ գործերից մեկով, օրինակ, վարույթ հարուցող մարմնի կողմից ներկայացվել են հետևյալ խախտումները²²

- Ժամկետից շուտ կատարել է վճռի օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ մակագրություն,
- Առանց դատական նիստ հրավիրելու կայացրել է հայցի ապահովումը վերացնելու մասին որոշում,
- Դատարանի որոշումը կողմին է ուղարկվել սահմանված ժամկետի խախտմամբ

ԲԴԽ-ն այս խումբ խախտումների պարագայում նույնպես գտել է, որ դատավորին անհրաժեշտ է հայտարարել նկատողություն:

Հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ 1 վարույթի շրջանակներում 1 կարգապահական խախտում հանդիսացող գործերի պարագայում արձանագրվել են խախտման որակման և, ըստ այդմ, ընտրված պատասխանատվության միջոցի տարբեր դրսևորումներ, որոնք, սակայն, իրենց հիմնավորումներով բավարար չեն եղել:

Այսպես, ԲԴԽ-8-Ո-Կ-04 գործով վարույթ հարուցած լիազոր մարմինը միջնորդության մեջ որպես խախտում է ներկայացրել հետևյալ արարքը՝ *դատավորի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ կատարողական թերթը տրվել է օրինական ուժի մեջ չմտած, բեկանված դատական ակտի հիման վրա, որի արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորման ուժով ստեղծվել է բեկանված դատական ակտի կատարման պարտադիրության և տեսանելիություն, և անհրաժեշտություն՝ հիմք ընդունելով՝ Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենքով սահմանված՝*

²² ԲԴԽ-5-Ո-03

հարկադիր կատարողի համար նշված կատարողական թերթը կատարելուց ձեռնպահ մնալու որևէ իրավական հնարավորության բացակայությունը:

Լիազոր մարմինը գտել է, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումն ակնհայտ է, կոպիտ և կատարված է կոպիտ անփութությամբ: Վարույթ հարուցած մարմինը նաև գտել է, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումը էական խախտում է: Դատավորի կողմից այնպիսի արարք է կատարվել, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ, ինչպես նաև դատավորի կողմից վարույթ հարուցած մարմնին ներկայացված բացատրությունը հիմք է տալիս կասկածի տակ առնել նրա պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը:

Նույն գործով ԲԴԽ-ն գտել է, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումը ոչ միայն կոպիտ է՝ հեղինակազրկում է դատական իշխանությունը, այլ նաև էական է, քանի որ անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ: Խորհուրդը նաև հիմնավոր է համարել վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը, որ դատավարական այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են հայքը և դրա տարրերը, դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը, դատական ակտը բողոքարկելու և բեկանելու հետևանքները, կատարողական թերթ տալը, հանդիսանում են դատավորի կողմից մշտական կիրառման ենթակա, և դրանց չիմացությունը կամ խեղաթյուրումը՝ առանց որևէ ողջամիտ իրավական ենթադրության կամ փաստարկի, ենթակա է գնահատման որպես դատական իշխանությունը հեղինակազրկող և դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծ (արարք):

ԲԴԽ-5-Ո-Կ-02 գործով վարույթ հարուցած կարգապահական հանձնաժողովը ներկայացրել է, որ դատավորը հուլիսի 16-ի, օգոստոսի 31-ի և հոկտեմբերի 5-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումներում չի նշել հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերը, ինչի արդյունքում խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 127-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Ե՛վ վարույթ հարուցող մարմինը, ե՛լ ԲԴԽ-ն ընդունել են, որ դատավորը պարտավոր էր որոշումներով արձանագրված թերություններին անդրադառնալ մեկ որոշման շրջանակներում, ինչը հայցադիմումը դեռ առաջին անգամ վերադարձնելու մասին որոշմամբ հայտնի է եղել դատավորին:

Նման պայմաններում ԲԴԽ կողմից արձանագրվել է, որ դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտումներն ակնհայտ են, քանի որ դրանց առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով: Միաժամանակ ընդունվել է, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումները համարվում են նաև կոպիտ, քանի որ չեն բխել իրավունքի գերակայության սկզբունքի էությունից, հանգեցրել են անձի՝ վերոնշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների սահմանափակմանը, որ իրավաչափ որոշման կայացմանը և որպես հետևանք՝ դատական իշխանության հեղինակազրկմանը, ինչի պայմաններում որոշում է

կայացվել դատավորին հայտարարել խիստ նկատողություն: Խիստ նկատողություն պատասխանատվության միջոցը ընտրելը, սակայն, որևէ կերպ չի հիմնավորվել:

Ուսումնասիրված բոլոր գործերով վարույթի հարուցման փուլում ներկայացվել են արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորումները: Բոլոր գործերով ներկայացվել է մեղքի առկայությունն ու մեղքի տեսակը:

ՎԱՐՈՒՅԹԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:*

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ որպես դատարան հանդես գալու դեպքում Խորհրդի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակության կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով կամ դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել:

Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ հրապարակային են անցկացվել թվով 10 վարույթներ, 14 գործով վարույթը եղել է ոչ հրապարակային (դռնփակ):

Ուսումնասիրված գործերի որոշումներում, սակայն, որևէ տեղեկություն չի եղել, թե ինչ հիմնավորմամբ է նիստը դռնփակ իրականացվել և ինչ նպատակով, ում կողմից է ներկայացվել նման միջնորդություն և ինչ պատճառաբանությամբ:

Դատավորների մասնակցությունը վարույթներին

Դատական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ «Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս Դատավորն իրավունք ունի՝

1) ծանոթանալու Բարձրագույն դատական խորհրդում հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու և ստանալու դրանց պատճենները.

2) հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ անելու.

3) ապացույցներ ներկայացնելու և մասնակցելու դրանց հետազոտմանը.

4) մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ, ինչպես նաև փաստաբանի միջոցով.

5) ստանալու փաստաբանի խելամիտ վարձատրության փոխհատուցում, եթե կարգապահական պատասխանատվության չի ենթարկվում:

2. Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքներից:

3. Բարձրագույն դատական խորհրդի կանչով դատավորի անհարգելի չներկայանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցն իրավասու է քննելու դատավորի բացակայությամբ»:

Դատավորների կողմից վարույթի ընթացքում նիստերին անձամբ մասնակցություն արձանագրվել է բոլոր 24 գործերով²³: Միևնույն ժամանակ 9 գործով դատավորները բացի անձամբ նիստին մասնակցելուց հանդես են եկել նաև ներկայացուցչի միջոցով:

22 վարույթներով դատավորները նաև վարույթ հարուցելու որոշման մեջ նշված յուրաքանչյուր խախտման վերաբերյալ ներկայացրել են բացատրություն՝ վիճարկելով խախտման փաստի առկայությունը և ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ:

Երկու դեպքում դատավորը ընդհանրապես գրավոր բացատրություն չի ներկայացրել²⁴:

Հատկանշական է, որ առանձին գործերով, թեպետև դատավորը ներկայացրել է գրավոր բացատրություն, սակայն բացատրության մեջ հիմնավոր փաստարկներ չի

²³ Մեկ գործով վարույթը եղել է կասեցված

²⁴ ԲԴԽ-6-Ո-Կ-2, ԲԴԽ-26-Ո-Կ-7

ներկայացրել՝ պատճառաբանելով, որ իրեն չեն տրամադրել կարգապահական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ ամբողջական նյութերը²⁵:

Մեկ այլ գործով դատավորը ներկայացրել է, որ վարույթի շրջանակներում ձեռք չեն բերվել դատավորի կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացած արարքը կատարված լինելու և դրա համար օրենքով պահանջվող պայմանների առկայությունը հավաստող ապացույցներ:

Թվով 4 վարույթներով դատավորի կողմից որպես խախտման հիմնավորում ներկայացվել է դատական ծանրաբեռնվածության խնդիրը, ինչը հանգեցրել է բացթողումների ու հնարավոր խախտումների:

Մեկ այլ գործով դատավորը որպես բացատրություն ներկայացրել է, որ վճռում ակնհայտ և կոպիտ դատավարական իրավունքի խախտումների փաստումը կարող է կատարվել բացառապես վերադաս դատական ատյանների կողմից սահմանված բողոքարկման ընթացակարգերի հիման վրա իրականացված քննության արդյունքում կայացված դատական ակտերով: Դատավորի կողմից ներկայացվել է նաև, որ նյութական և դատավարական իրավունքի նորմի մեկնաբանությունը դատարանի բացառիկ իրավագործությունն է, իսկ ստորադաս դատարանի մեկնաբանությունները կարող են վերանայվել, փոփոխվել միայն սահմանված կարգով՝ վերադաս դատարանի կողմից կայացված դատական ակտերով²⁶:

Այս առնչությամբ պետք է նշել, որ ուսումնասիրված կարգապահական գործերի մեջ նկատվել են վարույթներ, որոնց շրջանակներում ԲԴԽ-ն իր որոշմամբ ստանձնել է ոչ թե սոսկ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնողի դերը, այլ մանրամասն վերլուծության ենթարկելով օրինակ սնանկության ինստիտուտի վերաբերյալ օրենսդրական կարգավորումներն ու համապատասխան գործի փաստական հանգամանքները, հանդես է եկել որպես վերադաս ատյան:

Ինչ վերաբերում է վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներին, ապա բոլոր ուսումնասիրված գործերով որպես այդպիսին հիշատակվել են նախ գործի նյութերը:

Ուսումնասիրված վարույթների ընթացքում որպես ապացույց օգտագործվել են դատավորների կողմից ներկայացված գրավոր բացատրությունները, ինչը ինչպես արդեն ներկայացվեց, եղել է գրեթե բոլոր գործերով:

Երկու դեպքում գրավոր բացատրությունը ներկայացվել է պարզաբանման տեսքով և կրկին դրվել վարույթի շրջանակներում օգտագործվող ապացույցների մեջ:

Ինքնին վարույթների ընթացքում դատավորների կողմից ներկայացված հիմնական ապացույցը հանդիսացել է բացատրությունների ներկայացումը: Սրան

²⁵ ԲԴԽ-57-Ո-Կ-13

²⁶ ԲԴԽ-69-Ո-Կ-17

զուգահեռ վարույթ հարուցող մարմնի կողմից բոլոր գործերով ներկայացված ապացույցները հանդիսացել են գործի նյութերը և հանձնաժողովի որոշումը: Առանձին դեպքում լրացուցիչ ներկայացվել է ձայնագրություն: Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ բացատրություններից բացի միջնորդություններ, օրինակ, չի ներկայացվել: Առանձին առարկություն ներկայացվել է միայն երկու վարույթի շրջանակներում:

**ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Դիտարկված 25 որոշումներով 15-ի պարագայում ԲԴԽ կողմից վերջնական արդյունքում որոշում է կայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին: 9 վարույթով կայացվել է ներկայացված միջնորդությունը մերժելու մասին որոշում, մեկ դեպքում վարույթը կարճվել է:

Վարույթների ընդհանուր թիվը	Պատասխանատվության ենթարկելու մասին որոշում	Գործը կարճելու մասին որոշում	Միջնորդությունը մերժելու մասին որոշում
25	15	1	9

Հետաքրքրական են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունների մերժման վերաբերյալ ԲԴԽ հիմնավորումներն ու պատճառաբանությունները:

Ուսումնասիրված գործերից մեկով ԲԴԽ գտել է, որ *«թեեւ անկա խախտումներն ակնհայտ են, սակայն դրանք որպես կոպիտ որակվել չեն կարող, ուստի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք չեն կարող հանդիսանալ»²⁷:*

Մեկ այլ գործով ԲԴԽ-ն գործի քննության արդյունքում հանգել է այն եզրակացության, որ *«թեեւ զուտ հետևանքների տեսանկյունից անկա են բավարար հիմքեր խախտումը կոպիտ որակելու համար, մինչդեռ սուբյեկտիվ կողմի տեսանկյունից, հաշվի առնելով այն, որ դատավորի կողմից տվյալ իրավիճակում խախտման փաստը չէր կարող ընկալվել որպես ակնհայտ իրողություն, խախտումը չի կարող կոպիտ դիտարկվել»²⁸:*

Սույն գործով ԲԴԽ որոշումը վերաբերել է քրեադատավարական գործընթացում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդության քննարկմանն ու որոշում կայացնելուն: Վերջինիս առնչությամբ Խորհուրդը, կատարելով իրավահամեմատական վերլուծություն, գտել է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով խուզարկության դատավարական ընթացակարգի առանձին բաղադրիչներ անհրաժեշտ հստակություն և կարգավորման ողջամիտ ընդգրկվածություն չունեն»: Ավելին, նշվել է, որ *«ներպետական օրենսդրությամբ անգամ տարանջատված չեն խուզարկության հիմքերը՝ ըստ դատավարության մասնակիցների»:*

²⁷ ԲԴԽ-60-Ո-Կ-01
²⁸ ԲԴԽ- 17-Ո-Կ-06

Խուզարկության հիմքերի, մասնավորապես օպերատիվ տեղեկատվության և օպերատիվ-քննչական իրադրության համակցության առնչությամբ դեռևս բացակայում է ձեռնարկված միասնական դատական պրակտիկա, որպիսի պարագայում հնարավոր չէ առանձին իրավիճակներում դատավորի կողմից թույլ տրված խախտումը որակել որպես ակնհայտ²⁹:

Միննույն ժամանակ, սակայն, ԲԴԽ-ն գտել է, որ «դատավորի կողմից որոշումը կայացնելիս թույլ է տրվել դատավարական նորմի խախտում, մասնավորապես դատական ակտում դրա հիմքերն արտացոլված են թերի և անհարկի վերացական: Պարզ չէ, թե ներկայացված նյութերի մեջ կոնկրետ որ փաստական հանգամանքն է դատավորը դիտարկել որպես օպերատիվ-քննչական իրադրության անհրաժեշտ բաղադրիչ, որի համակցությամբ կարող է որոշվել օպերատիվ տեղեկատվության բավարար լինելը»:

ԲԴԽ-ն մերժելով ներկայացված միջնորդությունը նշել է, որ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդության քննարկման առնչությամբ դատավորն արտահայտել է որոշակի մոտեցումներ, որոնք ընդգրկված են տվյալ հարցի առնչությամբ իր հայեցողության իրավաչափ դրսևորումը, ինչը չի կարող ինքնին գնահատվել որպես խախտում և որակվել որպես կարգապահական պատասխանատվության հիմք»:

Ըստ էության, ԲԴԽ կողմից իրականացվել է խուզարկության ինստիտուտի համալիր օրենսդրական վերլուծություն՝ միասնական պրակտիկայի բացակայության պայմաններում խախտման ակնհայտության հարցը որոշելու համար: Այս և նմանատիպ իրավիճակներում, ըստ էության, խնդիրը ոչ այնքան դատավորի կողմից վարքագծի կանոնի կամ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտմանն է առնչվում, որքան իրավական որոշ հարցերի լրացուցիչ մեկնաբանությանը, ինչը պետք է դառնա ոչ թե կարգապահական վարույթում քննարկման ու պատասխանատվության առարկա, այլ դատավորի մասնագիտական գործունեության գնահատման բաղադրիչ:

Հատկանշական է մերժված միջնորդությամբ մեկ այլ վարույթ, որի շրջանակներում ԲԴԽ-ն մերժել է ներկայացված միջնորդությունը այն հիմնավորմամբ, որ *«թեև առկա խախտումը ակնհայտ է և հետևանքների առումով կարող է համարվել կոպիտ, սակայն չի կարող գնահատվել որպես դատական իշխանությունը հեղինակազրկող»³⁰*:

Սույն գործով խախտումը վերաբերել է կայացված դատական ակտը սահմանված ժամկետի խախտմամբ կողմերին ուղարկելուն, ինչի կապակցությամբ ԲԴԽ-ն նշել է, որ թույլ տրված խախտումը ակնհայտ բնույթ է կրում, քանի որ խախտված

²⁹ Նույն տեղում:

³⁰ ԲԴԽ-31-Ո-Կ-10

դատավարական նորմը հստակ և որոշակիորեն ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին: Գործով խախտման փաստը չի վիճարկվել նաև դատավորի կողմից, վերջինս պարզապես հղում կատարելով Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին, արտահայտել է այն մտեցումը, ըստ որի՝ թույլ տրված խախտումը չի հանգեցրել բացասական հետևանքների:

Ուշադրության է արժանի Խորհրդի դիրքորոշումն առ այն, որ տվյալ դեպքում՝ զուտ հետևանքների տեսանկյունից, առկա են բավարար հիմքեր խախտումը կոպիտ որակելու համար, մինչդեռ՝ կոնկրետ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի հանգամանքների հաշվառմամբ դատավորի կողմից տվյալ իրավիճակում խախտման փաստը չի կարող գնահատվել որպես դատական իշխանությունը հեղինակագրկող: Քանի որ դատական ակտի հանձնումն ուշացնելու ողջ ժամանակահատվածում դատավորի մոտ արձանագրվել է **աննախադեպ մեծ ծանրաբեռնվածություն**³¹: Ընդ որում, ինչպես նշվել է Խորհրդի կողմից, պայմանավորված գործի բարդությամբ, դրա առնչությամբ կայացված դատական ակտի կազմման գործընթացն ուղեկցվել է անհամեմատ մեծ ծավալի աշխատանքով: **Որպես օբյեկտիվ գործոն դիտարկվել է նաև դատավորի առողջական վիճակը**: Տվյալ պարագայում, ի տարբերություն դատավորների կողմից վկայակոչված գերծանրաբեռնվածության նմանատիպ դեպքերի, վարույթով պարզվել է, որ դատավորի մոտ եղել է աննախադեպ ծանրաբեռնվածություն, ինչպես նաև առողջական խնդիրներ:

Այստեղ պետք է նշել, որ, նախ, ԲԴԽ կողմից չի ներկայացվել լրացուցիչ պարզաբանում դատավորի աննախադեպ ծանրաբեռնվածության վերաբերյալ, մասնավորապես, թե ինչպես է դա գնահատվել, ինչ չափանիշով և որն է վերջինիս տարբերությունը սովորական ծանրաբեռնվածությունից: Սա կարևորվում է նրանով, որ հարցը դատական պրակտիկայում և դատավորների կողմից ամենից շատ շոշափված և քննարկման առարկա հարցերից է:

Ավելին, դատավորների ծանրաբեռնվածության հարցում ԲԴԽ կողմից չի նկատվել միասնական պրակտիկայի կիրառում: Մասնավորապես, մի շարք այլ գործերով, որոնցով դատավորները նախկինում կարգապահական պատասխանատվության ենթարկված նույնիսկ չեն եղել և խախտման առնչությամբ ներկայացվել է գերծանրաբեռնվածության հարցը, ԲԴԽ-ն նշել է, որ այդ փաստարկով թույլատրված խախտումները չեն կարող արդարացվել³²: Բնականաբար յուրաքանչյուր գործով առկա են ուրույն փաստական հանգամանքներ և խախտումներ, սակայն դատավորների ծանրաբեռնվածության նկատմամբ ԲԴԽ-ն մտեցումը միասնական բնույթ չի կրում և մեկնաբանության տեսանկյունից բավարար հիմնավոր չէ:

³¹ Նույն տեղում

³² ԲԴԽ-Ո-Կ-8, ԲԴԽ-5-Ո-Կ-03, ԲԴԽ-6-Ո-Կ-3

Ուսումնասիրված գործերում առկա են ԲԴԽ կողմից կայացված որոշումներ, որտեղ բավականին հանգամանալից քննարկվել են վարույթի խնդրո առարկա հարցերն ու հնարավոր խախտման կամ դրա բացակայության հիմնավորումները: Օրինակ ԲԴԽ-26-Ո-Կ-6 գործով Խորհրդի կողմից հանգամանալից քննարկման առարկա է դարձել գործի քննության ողջամիտ ժամկետի հարցը միջազգային և ներպետական օրենսդրությամբ ընդունված սկզբունքների ու կարգավորումների լույսի ներքո և, ըստ այդմ, տրվել սպառնիչ հիմնավորում խախտման բացակայության վերաբերյալ: Մասնավորապես, Խորհուրդը նշել է, որ ողջամիտ ժամկետներում գործի քննության կոնկրետ չափանիշներ լինել չեն կարող, կարող են լինել միայն ողջամիտ ժամկետներում գործի քննության ուղենիշներ, որոնց հաշվառմամբ կապահովվի գործի քննության ժամկետների ողջամիտ տևողություն և հաշվի կառնվեն յուրաքանչյուր կոնկրետ գործով առկա հանգամանքները և առանձնահատկությունները: Հղում կատարելով ԵԴԽԽ համապատասխան սկզբունքներին՝ ԲԴԽ-ն արձանագրել է, որ տվյալ գործով քննության 7 տարվա ժամկետն ինչպես անկանխակալ դիտորդի տեսանկյունից, այնպես էլ դատավարության կողմերի օրինական իրավունքների իրացման տեսանկյունից չի կարող առերևույթ դիտվել որպես ողջամիտ ժամկետ: Ողջամտությունը պետք է գնահատվի գործի իրավական և փաստական բարդության, վարույթի մասնակիցների վարքագծի և վերջիններիս համար գործի տևական քննության հետևանքների հիման վրա: Իսկ տվյալ գործով առկա է եղել կողմերի բազմաթիվություն, առկա է եղել երկու հայցադիմում, 7 տարիների ընթացքում անցկացվել է 66 նիստ, որից 15-ը հետաձգվել է կողմերի միջնորդությամբ: Գործի իրավական և փաստական բարդության համատեքստում, մտահոգություն հայտնելով գործի քննության տևական ժամկետի կապակցությամբ, և գնահատելով Դատավորի գործողությունները, Խորհուրդը գտել է, որ դատավորը չի կատարել այնպիսի գործողություն կամ զերծ չի մնացել այնպիսի գործողություն կատարելուց, որոնք կխախտեին Դատավորի կողմից ողջամիտ ժամկետում օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու և լուծելու օրենսդրական պահանջը, ուստի թույլ չի տրվել դատավորի վարքագծի կանոնի այնպիսի խախտում, որը կհանգեցներ կարգապահական պատասխանատվության:

ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դատական օրենսգրքի 154-155-րդ հոդվածներով սահմանվում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Խորհրդի որոշման ընդհանուր նկարագիրն ու ներկայացվող պահանջները:

Այսպես, մեկ կարգապահական վարույթի շրջանակներում Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է մեկ որոշում՝ կիրառելով պատասխանատվության մեկ միջոց: Եթե կարգապահական խախտման հիմքը պարբերաբար խախտումն է, ապա Բարձրագույն դատական խորհուրդը կիրառում է պատասխանատվության մեկ միջոց:

Որոշումն ընդունելիս կարող են ներկա լինել միայն Բարձրագույն դատական խորհրդի անդամները: Բարձրագույն դատական խորհուրդը նախ՝ քվեարկության է դնում կարգապահական խախտման առկայության, ապա՝ կարգապահական տույժի ընտրության հարցը:

Բարձրագույն դատական Խորհրդի կողմից որոշում ընդունելիս խորհրդի անդամների արտահայտած դիրքորոշումները հրապարակման ենթակա չեն:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

- 1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,*
- 2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ:*

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բաղկացած է ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

ԲԴԽ կողմից ընդունված բոլոր որոշումներով հակիրճ ներկայացված է գործի նախապատմությունը, վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը, կողմ հանդիսացող դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ, կարգապահական պատասխանատվության հարցի համար էական համարվող հանգամանքներն ու Խորհրդի պատճառաբանություններն ու վերջնական եզրահանգումը:

ԲԴԽ պատճառաբանությունների ու եզրահանգումների հիմքում, յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների հետ համադրությամբ, տրվել է նաև խախտման բնույթի մեկնաբանությունը՝ համապատասխան ներպետական և միջազգային կարգավորումների լույսի ներքո:

Այսպես, ուսումնասիրված բոլոր գործերով ԲԴԽ կողմից որոշման մեջ հղում կատարվել է ինչպես ՀՀ Սահմանադրությանն ու ՀՀ դատական օրենսգրքին, այնպես էլ առանձին ոլորտներ կարգավորող՝ համապատասխան օրենսդրական ակտերին:

5 գործով ԲԴԽ-ն հղում է կատարել և կիրառել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, 8 գործով՝ Վճռաբեկ դատարանի որոշումներին:

12 գործով ԲԴԽ վկայակոչել է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան:

Առանձին վարույթների շրջանակներում ԲԴԽ-ն հղում է կատարել այնպիսի ստանդարտների ու փաստաթղթերի, ինչպիսիք են ՄԱԿ-ի 7-րդ կոնգրեսի կողմից 1985թ սեպտեմբերի 6-ին ընդունված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները», «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ (94) 12 հանձնարարականը³³, «Արեւելյան Եվրոպայի, հարավային Կովկասի և կենտրոնական Ասիայի երկրներում դատական անկախության» Կիևյան հանձնարարականին, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec/2010/2012 հանձնարարականը³⁴, Եվրոպական Խարտիան, Վենետիկի հանձնաժողովի կարծիք N 963/2019 CDL-AD (2019)024-ին³⁵:

Խորհուրդը 7 գործի շրջանակներում հղում է կատարել իր իսկ նախկին որոշումներին: Մասնավորապես, «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը, գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափեր սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-23-Ո-49 որոշումը, ԲԴԽ-29-Ո-67 որոշում, ԲԴԽ նախագահի թիվ 683-Լ հրաման, ինչպես նաև դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նախկին որոշումներ:

ԲԴԽ որոշումների հիմնավորումներն ու պատճառաբանությունները

Ուսումնասիրության շրջանակներում որպես առանձին հարց կարևորվել է նաև ԲԴԽ կողմից կայացվող վերջնական որոշումների պատճառաբանություններն ու հիմնավորումները, ինչը դատավորին կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշումների օրինականության հիմնական երաշխիքն է: Ի հավելումն արդեն իսկ վերևում ներկայացված կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործի քննության արդյունքում կայացված որոշումների ու

³³ ԲԴԽ-8-Ո-Կ-04

³⁴ ԲԴԽ-24-Ո-Կ-07, ԲԴԽ-69-Ո-Կ-17

³⁵ ԲԴԽ-30-Ո-Կ-9

հիմնավորումների՝ առանձին ներկայացվում է նաև ԲԴԽ որոշումների պատճառաբանությունների առնչությամբ վկայակոչման հիշարժան հատվածներ:

Այսպես, կարգապահական պատասխանատվության հիմքերից յուրաքանչյուրի և վերը ներկայացված օրինակների առնչությամբ ԲԴԽ կողմից տրվել են տարբեր մեկնաբանություններ ու պատճառաբանություններ դրվել որոշումների հիմքում:

Մասնավորապես, անդրադառնալով օրինակ թույլ տրված խախտումը կոպիտ որակելու հարցին, ԲԴԽ-ն արձանագրել է, որ *<տվյալ դեպքում զուտ հետևանքների տեսանկյունից առկա են բավարար հիմքեր խախտումը կոպիտ որակելու համար, մինչդեռ՝ սուբյեկտիվ կողմի տեսանկյունից, հաշվի առնելով, որ դատավորի կողմից տվյալ իրավիճակում խախտման փաստը չէր կարող ընկալվել որպես ակնհայտ իրողություն, խախտումը չի կարող կոպիտ դիտարկվել>*³⁶: Սույն գործով ԲԴԽ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը մերժել է: Որոշումը վերաբերել է բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին դատարանի որոշմանը, որը ըստ վարույթ հարուցած մարմնի չի բխում քաղաքացու բնակարանի անձնեռնմխելիության և բնակարանում խուզարկություն կատարելու վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի, Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների պահանջներից, ինչով խախտվել է քաղաքացու բնակարանի անձնեռնմխելիության սահմանադրական իրավունքը:

Մեկ այլ գործով արարքը վարույթ հարուցող մարմնի կողմից վարքագծի կոպիտ է որակվել այն հիմնավորմամբ, որ դատավորը ինքնաբացարկի որոշում է կայացրել ոչ թե օրենսգրքով նախատեսված՝ ինքնաբացարկի հիմք հանդիսացող որևէ հանգամանքի առկայության պարագայում, այլ մեղադրանքի կողմից չհիմնավորված կասկածները փարատելու պատճառաբանությամբ³⁷:

Հատկանշական է, որ ԲԴԽ-ն այդ գործով գտել է, որ Դատավորը կոպիտ անփութությամբ թույլ է տվել դատավորի վարքագծի կանոնի կոպիտ խախտում: Մասնավորապես, ԲԴԽ-ն նախ արձանագրել է, որ դատավորի կողմից թույլ տրված վարքագծի կանոնի խախտումը կոպիտ է, քանի որ այն, հանդիսանալով հատկապես հանրային մեծ հնչեղություն ունեցող գործի քննությունն իրականացնելուց ոչ իրավաչափ հիմքերով խուսափում, ավելի ընդգծելի է դարձնում անաչառ ու անկախ լինելու դատավորի ունակության խոցելիությունը, որի արդյունքում հեղինակագրկվում է դատական իշխանությունը: Խորհուրդը նշել է նաև, որ դատավորի անկախությունը սուսկ արտաքին ուղղվածության վերացական պահանջ չէ, այն կարող է երաշխավորված լինել միայն այն դեպքում, երբ դատավորը եւս օժտված է անկողմնակալ և անաչառ լինելու ունակությամբ: Արտաքին ազդեցությունն

³⁶ ԲԴԽ-17-Ո-Կ-06

³⁷ ԲԴԽ-24-Ո-Կ-07

ինքնին բավարար չէ դատավորների անկախության ու անաչառության խոցելիության մասին միանշանակ դատողություններ անելու համար, քանզի դրան ողջամիտ եղանակներով կարող է և պարտավոր է հակազդել դատավորը:

Ուշադրության են արժանի նաև դատավորների կողմից ինքնաբացարկի ինստիտուտի կիրառման առնչությամբ հարուցված վարույթների արդյունքում խորհրդի դիրքորոշումն ու մեկնաբանությունները:

Այսպես, ԲԴԽ կողմից կայացված որոշումներից մեկով ընդունել է, որ դատավորն ինքնաբացարկ է հայտնել այն պատճառաբանությամբ, որ 2018 թ դեկտեմբերի 26-ին և 2019 թ վականի հունվարի 10-ին՝ ոչ իր հերթապահության օրը, Դատարան մուտքագրված և իրեն հունվարի 11-ին մակագրված քննության առարկա միջնորդությունների քննությունն իր կողմից կարող էր ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության վերաբերյալ: Բարձրագույն դատական խորհուրդը, սակայն, նման պատճառաբանությունը համարել է անհիմն, քանի որ միայն այն փաստը, որ դատավորին միջնորդությունները մակագրվել են ոչ Դատարան մուտք լինելու օրը, չի կարող համարվել բավարար իր անաչառությունը կասկածի տակ դնելու համար: Հետևաբար, ինքնաբացարկ հայտնելու՝ օրենքով սահմանված որևէ հիմք բացակայել է: ԲԴԽ-ն եզրահանգել է, որ դատավորի կողմից թույլ տված վարքագծի խախտումը կատարվել է կոպիտ անփութությամբ: Ինչը հանգեցրել է նախազգուշացում կարգապահական տույժի³⁸:

Հարկ է, սակայն, նշել, որ այս և նմանատիպ մյուս գործով, չնայած ԲԴԽ կողմից արարքներին տրվել է նույն որակումը՝ կոպիտ անփութությամբ վարքագծի կանոնի խախտում, միևնույն ժամանակ երկու դեպքում էլ նշվել է, որ դատավորները կարգապահական խախտում թույլ տալու պահին կարգապահական տույժ չեն ունեցել, այնուհանդերձ մեկ դեպքում պատասխանատվությունը եղել է նկատողություն, մյուսում՝ նախազգուշացում:

Մասնկության ինստիտուտի առնչությամբ հարուցված վարույթներով ԲԴԽ կողմից կայացված որոշումներում նկատվել է խորքային ուսումնասիրություն ու եզրահանգումների հիմնավորվածություն:

Այսպես, ուսումնասիրված գործերից մեկով³⁹ ԲԴԽ կողմից մանրամասն օրենսդրական վերլուծության ու մեկնաբանության է ենթարկվել սնանկության ինստիտուտը, սահմանված ժամկետները, ընթացակարգերը: Խորհուրդը եզրահանգել է, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումները հանգեցրել են վարույթի մասնակիցների իրավունքների խախտմանը, մասնավորապես, պարտատիրոջ դեպքում՝ ողջամիտ ժամկետներում իր պահանջների բավարարում ստանալու իրավունքի խախտմանը:

³⁸ ԲԴԽ-24-Ո-Կ-07

³⁹ ԲԴԽ-29-Ո-Կ-8

Նմանատիպ գործերից մեկով դատավորի կողմից ներկայացված բացատրությամբ բարձրացվել է դատավորների գերձանրաբեռնվածության խնդիրը⁴⁰: Խորհուրդը, անդրադառնալով դատավորի կողմից ներկայացված փաստարկներին՝ այն է գերձանրաբեռնվածությանն ու աշխատանքային պայմանների ոչ բավարար լինելուն՝ ընդգծել է, որ մի շարք վարույթներում դատավորների կողմից մասնավորապես գերձանրաբեռնվածության փաստարկը ներկայացվել է, սակայն Խորհուրդը չի արդարացրել այդ փաստարկով թույլ տրված խախտումները: Նմանատիպ դեպքերում հարցի առնչությամբ խորհրդի կողմից արդեն իսկ կա ձևավորված պրակտիկա:

ԲԴԽ որոշմամբ ընդունել է, որ թույլ տրված խախտումները հանգեցրել են դատավորի վարքագծի կանոնների խախտման, որոնք նվազեցրել են դատական համակարգի նկատմամբ վստահությունը և հեղինակագրկել դատական իշխանությունը: Խորհուրդը գտել է նաև, որ դատավորի կողմից թույլ են տրվել նաև դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք կրում են կոպիտ և ակնհայտ բնույթ: Ընդ որում, դատավարական իրավունքի նորմերի և դատավորի վարքագծի կանոնների խախտումները թույլ են տրվել կոպիտ անփութությամբ:

Հատկանշական է, սակայն, որ մեկ գործով նման խախտումների փունջի պարագայում Խորհուրդը որոշել է դատավորին հայտարարել նախազգուշացում՝ որևէ կերպ չհիմնավորելով ընտրված պատասխանատվության միջոցը և դրա անհրաժեշտությունն ու բավարար լինելը կոնկրետ վարույթի շրջանակներում⁴¹:

Խախտումը էական որակելու՝ ԲԴԽ-8-Ո-Կ-04 գործով ԲԴԽ որոշել է, որ գործով մերջբերված և քննարկված Դատական օրենսգրքի 5-րդ հոդվածը վերաբերում է դատավորի պաշտոնի անհամատեղելիության սկզբունքին, որը դատավորի անկախության հիմնարար երաշխիքներից է: Իսկ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է և պայմանավորված է դատավորի դրսևորած այնպիսի վարքագծով, որն անխուսափելիորեն հեղինակագրկում է դատական իշխանությունը, էապես նվազեցնում է դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասում է դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալմանը: Այսինքն՝ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե պաշտոնների անհամատեղելիությանը, այլ դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի արարքին:

Սույն հիմնավորմամբ ԲԴԽ որոշել է դատավորի լիազորությունները դադարեցնել էական կարգապահական խախտման հիմքով:

⁴⁰ ԲԴԽ-5-Ո-Կ-03

⁴¹ ԲԴԽ-9-Ո-Կ-4

ԿԻՐԱՌՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ

Դատական օրենսգրքի 149-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելու արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը՝

1. Նախազգուշացում,
2. Նկատողություն,
3. Խիստ նկատողություն,
4. Էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում:

Օրենսդիրը նախատեսում է նաև համաչափության սկզբունքը: Վերջինիս համաձայն՝ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Եթե խիստ նկատողություն ստանալու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, նկատողություն ստանալու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ նախազգուշացում ստանալու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, դատավորը չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ապա նա համարվում է կարգապահական տույժ չունեցող:

Ինչպես արդեն ներկայացվել է, ուսումնասիրված կարգապահական վարույթներից 15-ի պարագայում ներկայացված միջնորդությունը բավարարվել է և որոշում է կայացվել Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Աղյուսակ.

Նախազգուշացում	Նկատողություն	Խիստ նկատողություն	Լիազորությունների դադարեցում
4	6	3	2

Խորհրդի կողմից հիմնականում ընտրվել է նկատողություն տույժի տեսակը՝ թվով 6 վարույթներով, 4 դեպքում՝ նախազգուշացում, 3 դեպքում՝ խիստ նկատողություն: 2 դեպքում որոշում է կայացվել էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին:

Ընտրված կարգապահական պատասխանատվության միջոցների հարցում խնդրահարույց է հանդիսացել ընտրված կարգապահական տույժի հիմնավորման հարցը:

Այսպես, դիտարկված մի շարք գործերով⁴² հարուցված վարույթի շրջանակներում չնայած արարքին տրվել է համապատասխան որակում, օրինակ՝ կոպիտ անփութությամբ արարքի կատարում, ԲԴԽ կողմից հետագա ուսումնասիրությամբ նույնպես տրվել է համապատասխան որակում և եզրահանգվել, որ տեղի է ունեցել խախտում, այնուհանդերձ կոնկրետ պատասխանատվության միջոցի ընտրությունը որևէ կերպ չի հիմնավորվել:

Դիտարկված գործերից մեծամասնության պարագայում սուկ հղում կատարելով ուսումնասիրված հանգամանքներին և ՀՀ Դատական օրենսգրքի համապատասխան հոդվածներին որոշում է կայացվել ընտրել այս կամ այն պատասխանատվության միջոցը:

Տույժի համաչափության հիմնավորումը կատարվել է բացառությամբ օրենսդրական դրույթի հղմամբ՝ ԲԴԽ որոշմամբ մեջբերելով համապատասխան օրենսդրական դրույթը, արձանագրվել է ընդամենը, որ ՀՀ Դատական օրենսգրքի սահմանադրական օրենքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս ԲԴԽ հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ⁴³:

ԲԴԽ-24-Ո-Կ-07, ԲԴԽ-14-Ո-Կ-05, ԲԴԽ-24-Ո-Կ-08 և մի շարք այլ գործերով բարձրացվել է կարգապահական մեկ խախտում համարվող արարքի հարց, տրվել է համանման որակումներ, սակայն Խորհրդի կողմից ընտրվել են կարգապահական պատասխանատվության միջոցի տարբեր տեսակներ, ինչը որևէ կերպ չի հիմնավորվել և պարզաբանվել, թե կոնկրետ տվյալ դեպքում ինչու էր անհրաժեշտ հատկապես պատասխանատվության այդ միջոցը ընտրել:

Այսինքն, հավելյալ վերլուծություն և այդ սկզբունքի տեղայնացում կոնկրետ գործի հանգամանքների հետ, չի իրականացվել, որևէ հիմնավորում ընտրված պատասխանատվության կոնկրետ տեսակի առնչությամբ, չի ներկայացվել:

⁴² ԲԴԽ-63-Ո-Կ, ԲԴԽ-69-Ո-Կ-16, ԲԴԽ-69-Ո-Կ-17

⁴³ ԲԴԽ-69-Ո-Կ17

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ ընդհանուր եզրահանգումները՝

- Որպես կանոն վարույթ հարուցող մարմնի կողմից ներկայացված կարգապահական պատասխանատվության վարույթ հարուցելու միջնորդությունները չեն հրապարակվում, այն ներկայացվում է ԲԴԽ կողմից կայացվող որոշման մեջ: Սակայն վարույթ հարուցող մարմնի կողմից ներկայացված հիմնավորումներն ու արարքի որակումները ամբողջական ծավալով հասանելի չեն: Միևնույն ժամանակ, նույնիսկ հարուցված վարույթի շրջանակներում ներկայացված նախնական միջնորդությամբ բարձրացված պնդումներն ու որակումները մնում են չհրապարակված, ինչը ողջ գործընթացի համալիր ու օբյեկտիվ դիտարկման տեսանկյունից խնդրահարույց է:
- Բոլոր այն դեպքերում, երբ վերջնական որոշմամբ մանրամասն հղում է կատարվել նաև վարույթ հարուցող մարմնի կողմից արարքների որակմանը ըստ խախտման հիմքի, նկատվել է որակման անհստակություն ու նույնանման իրավիճակներին միասնական մոտեցման բացակայություն:
- ԲԴԽ կողմից ուսումնասիրված առանձին որոշումներով արձանագրվել է դեպք, երբ վարույթ հարուցող մարմնի ներկայացրած միջնորդությամբ, որը մեջբերվել է վերջնական որոշմամբ, արարքին որակում չի տրվել:
- Ուսումնասիրված և ոչ մի գործով ԲԴԽ կողմից չի հիմնավորվել կոնկրետ պատասխանատվության տեսակի՝ տույժի ընտրության հարցը, չեն ներկայացվել այն հիմքերը, որոնց հիման վրա որոշվել է տվյալ միջոցը: Ըստ այդմ, թեպետև ֆորմալ առումով հղում է կատարվել համաչափության սկզբունքին, սակայն որոշումներով տեսանելի չէ, թե կոնկրետ արարքի կամ արարքների համար տվյալ միջոցը համաչափ է եղել, թե ոչ: Հարկ է նշել, որ պատասխանատվության միջոցի առնչությամբ արձանագրված այս խնդիրը բարձրացվել է նաև դեռևս Արդարադատության խորհրդի գործունեության և կայացրած որոշումների առնչությամբ, եւ նոր Խորհրդի ձևավորումից ու օրենսդրության փոփոխություններից հետո, ըստ էության, շարունակում է մնալ արդիական:
- Հստակ չէ, թե ինչ չափանիշներով ԲԴԽ-ն որակում և ընտրում մեկ վարույթի շրջանակում մի քանի խախտման պարագայում կոնկրետ պատասխանատվության միջոցը, նմանապես, հստակ չէ նման իրավիճակներում համաչափության սկզբունքի պահպանությունը: Այս խնդիրը նույնպես արձանագրվել էր կազմակերպության կողմից Արդարադատության խորհրդի որոշումների ուսումնասիրության արդյունքում:
- Ոչ հրապարակային նիստ անցկացնելու դեպքում ԲԴԽ կողմից չի ներկայացվում դրա պատճառներն ու հիմնավորումները, չի ներկայացվում նաև, թե ում կողմից է ներկայացվել փակ նիստ անցկացնելու միջնորդությունը:
- Արձանագրվել է դեպք, երբ դատավորը վարույթի ընթացքում չի կարողացել հիմնավոր փաստարկներ ներկայացնել խախտման առնչությամբ, քանի որ իրեն

չեն տրամադրել կարգապահական պատասխանատվության վարույթի ամբողջական նյութերը:

- Առանձին վարույթներով, օրինակ սնանկության ինստիտուտին վերաբերող գործերով, արձանագրվել է ԲԴԽ կողմից որպես վերադաս և դատական ակտի վերանայման ատյան գործելու պրակտիկա, ինչը հակասում է Խորհրդի՝ ՀՀ Սահմանադրությամբ ու Դատական օրենսգրքով տրված դերին ու իրավասություններին:
- Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պրակտիկայում անհրաժեշտ է հստակեցնել կարգապահական պատասխանատվության ու դատավորների գնահատման ինստիտուտների տարբերությունները, քանի որ որոշ դեպքերում հարուցված կարգապահական վարույթները բխել են միասնական պրակտիկայի բացակայության կամ լրացուցիչ օրենսդրական զարգացման անհրաժեշտության հարցերից, ինչը ավելի շատ պահանջում է դատավորների գնահատում, ըստ այդմ նաև վերապատրաստումների անցկացում ու կարողությունների լրացուցիչ զարգացում:
- Դատելով առանձին վարույթներով դատավորների կողմից ներկայացված բացատրություններից՝ վերջիններիս համար դատական ծանրաբեռնվածությունը շարունակում է մնալ հնարավոր խախտումներին լրացուցիչ նպաստող հանգամանք, ինչը, սակայն, ԲԴԽ կողմից որպես բավարար հիմնավորում չի ընդունվում, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը աննախադեպ ծանրաբեռնվածության մասին է, որի, չափանիշները, սակայն, հստակ չեն:
- Թեպետև օրենսգրքով նախատեսված է, որ Խորհրդի կողմից պատասխանատվության տեսակն ընտրելիս հաշվի է առնվում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձն ու ուշադրության արժանի այլ հանգամանքներ, սակայն որոշում կայացնելիս այս հանգամանքները մանրամասն քննարկման առարկա չեն դառնում, իսկ այլ հանգամանքներ պայմանը որևէ որոշմամբ չի կիրառվել և հստակ չէ, թե խոսքը ինչի մասին կարող է լինել:
- Նմանատիպ խնդիր արձանագրվել է նաև սնանկության գործերի քննության արդյունքում հարուցված կարգապահական վարույթներին, ինչը վկայում է ոչ այնքան խախտման, որքան սնանկության հետ կապված առանձին հարցերի վերաբերյալ դատավորների մոտ տեսական և պրակտիկ հմտությունների ու գիտելիքների զարգացման անհրաժեշտություն՝ որպես դատավորների գնահատման գործընթացի մաս:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հարուցված կարգապահական վարույթների արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման հետ միասին հրապարակել նաև վարույթ հարուցող մարմնի կողմից ներկայացված համապատասխան միջնորդությունն ամբողջությամբ:
- Խթանել և զարգացնել վարույթ հարուցող մարմնի կարողությունները դատական օրենսգրքով նախատեսված կարգապահական պատասխանատվության հիմքերի որակման ու հիմնավորման մասով:
- Յուրաքանչյուր դեպքով ապահովել վարույթ հարուցող մարմնի կողմից միջնորդությամբ արարքին պատշաճ որակում տալը:
- Պրակտիկայում ապահովել գնահատման և դատավորներին կարգապահական պատասխանատվության հանձնաժողովների գործառույթների տարանջատումը: Մասնավորապես, առանձին օրենսդրական ինստիտուտների վերաբերյալ դատավորների մեկնաբանություններն ու առաջացած հնարավոր խնդիրները դարձնել գնահատման առարկա, և ոչ միանշանակ կարգապահական վարույթի հարց:
- Խորհրդի կողմից պատասխանատվության կոնկրետ միջոցի ընտրության հարցը պետք է լինի հիմնավորված և համաչափության սկզբունքի տեսանկյունից պահպանմամբ:
- Մի վարույթի շրջանակում արձանագրված մի քանի խախտումը պետք է մանրամասն վերլուծվի և հիմնավորվի ընտրված պատասխանատվության միջոցի համատեքստում:
- Ոչ հրապարակային նիստեր անցկացնելիս հրապարակել որոշման հիմքերն ու հիմնավորումները:
- Հարուցված վարույթների շրջանակներում Դատական օրենսգրքով նախատեսված կարգով դատավորներին հասանելի դարձնել վարույթի բոլոր նյութերը:
- Բացառել կարգապահական վարույթի ընթացքում Խորհրդի դերակատարումը որպես վերադաս ատյան:
- Ապահովել դատավորների ծանրաբեռնվածության վերաբերյալ Խորհրդի կողմից միասնական պրակտիկայի ձևավորումն ու կիրառումը՝ սահմանելով որոշակի չափանիշներ, թե որ դեպքում ծանրաբեռնվածությունը կարող է թույլ տրված խախտման հիմնավոր պատճառ լինել: